Զօրավար Քեազիմ Կարաբեքիրը զեկուցեց, թէ անհրաժեշտ է Հայաստանի դէմ ընդհանուր յարձակում գործել, քանի որ բոլշևիկների հետ յարաբերուելու միակ գիծը հայերի կողմից թիւրքական հողերի վրա գործող ասպատակութիւնների պատճառով՝ սպառնում է թիւրքերին ընդմիշտ կորել բոլշևիկներից։

Զինուորական խորհուրդը դիմեց Կարաբեքիրին հետևեալ հարցով. — ինքը ունի՞ բաւական ոյժ և հաւատացած է, որ քեմալական բանակը կատարեալ յաղթութիւն կունենայ։

Քեազիմ Կարաբեքիրի տրամադրութեան տակ գտնւում է 4 դիվիզիա, որից երկուսը գտնւում է Ռէմզիի հրամանատարութեան ներքոյ։ Այս դիվիզիաներից իւրաքանչիւրը կը լինի բաղկացած 8—9 հազար ասկեարից, որոնց կաջակցեն նաև քիւրդ ու թիւրք հրոսախմբերը։ Թիւրքական հրետանին, ասում է Կարաբեքիրը, չնայած որ լրիւ չէ, բայց կարող է բաւարարել արևելեան ճակատին։

Բայց և այնպէս, Մուստաֆա Քեմալի համար դեռ մնում էր մի մութ կէտ. Հայաստանի դէմ յարձակուելու դէպքում պէտք էր գիտնալ, թէ ի՞նչ դիրք կը բռնէ Վրաստանը, որը իր տրամադրութեան տակ ունէր, ինչպէս յայտնի է, թէև փոքր, բայց լաւ կազմակերպուած բանակ։ Այս առթիւ բոլորովին ապահով լինելու համար Մուստաֆա Քեմալը ծածկագիր ռադիոյով դիմեց Բաքու, ուր գտնւում էր թիւրքական պատուիրակութիւնը Արևելեան Համագումարին մասնակցելու։ Անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելուց յետոյ Բաքուից Անդորա ստացուեց հետևեալ լակոնական պատասխանը. «Ճանապարհը բաց է»։ Ռէմզի փաշան, որ այնտեղ էր գտնւում, յանձն առաւ հող պատրաստել Բաքուում և աշխատեց ազրբէջանեան–բոլշևիկեան շրջանները այդ հարցին կողմնակից դարձնել։ Միւս կողմից, համագումարի անդամ երկրագործութեան նախկին նախարար Իսուֆ Քեմալ բէյը ստանձնեց մի գաղտնի առաքելութիւն Թիֆլիսում և Բաքուից անցաւ Վրաստան։

Մի քանի օր յետոյ, քեմալական պատուիրակութիւնը Իսուֆ Քեմալ բէյի նախագահութեամբ, եկաւ Թիֆլիս և իջաւ «Օրիանտ» հիւրանոցը, ուր նախօրօք սենեակներ էին պահուած այդ պատուիրակութեան համար։ Յաջորդ օրը, Իսուֆ Քեմալ բէյը ընդունուեց Վրաստանի նախագահ Ժորդանիայի և յետոյ, անմիջապէս՝ արտաքին գործոց նախարար Գեգեչկորիի կողմից։ Տեսակցութիւնը տևեց մի ժամից աւելի, որից յետոյ նրան ճաշ տուեց Կովկասեան Ակումբում։ Իսուֆ Քեմալ բէյի պաշտօնը վերջացել էր յաջողութեամբ։ Այդ պաշտօնը զուտ խորհրդակցական էր և շատ կարճ տևեց։ Երկու օր անց, խորհրդային դեսպան ընկ. Կիրովի հետ վերջին անգամ տեսակցելուց յետոյ, մեկնեց։

Ռէմզին անմիջապէս իր 13 զօրաբաժնի գլուխն անցաւ և սեպտեմբեր 19ին դիմեց դէպի սահման։ Զօրքին յայտարարուեց, թէ պատերազմը սկսուած է։ Պատերազմական գործողութիւնները յետաձգուեցին մինչև Քեազիմ Կարաբէքիրի ինքնաշարժով հասնելը։ Վերջինս, ճանապարհ ընկնելուց առաջ, ծածկագիր ռադիոյով Բաքու հաղորդեց իր ծրագիրը։

Բանակը պատրաստ էր գործողութիւններն սկսելու։ Սեպտ. 23–ին դիմեցին յարձակման»։

Եւ իսկապէս, գարգացող դէպքերը կէտ առ կէտ արդարացրին «Ժուրնալ դ'Օրիան»–ի տեղեկութիւնները։ Սեպտ. 11–ին, Հայաստանի սպարապետի սպայակոյտը հաղորդում էր.